

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 33/13

ք.Երևան

15 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով վճարված գումարները դատական կարգով վիճարկվող ակտի մարմանն ուղղելու դեմ Ա/Ձ Սուսաննա Պողոսյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

ՀՀ ԿԱ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետի 17.11.2017թ. թիվ 2138821 հանձնարարագրի համաձայն իրականացված ստուգման արդյունքում 2017թ. դեկտեմբերի 19-ին կազմվել է թիվ 2138821 ստուգման ակտը, որի համաձայն Ա/Ձ Սուսաննա Պողոսյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության 300.000 դրամի չափով:

Ա/Ձ Սուսաննա Պողոսյանն օրենքով սահմանված երկամսյա ժամկետում ՀՀ վարչական դատարան է ներկայացրել հայցադիմում թիվ 2138821 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որն ընդունվել է վարույթ (վարչական գործ թիվ ՎԴ/1816/05/18):

Ակտի կայացումից հետո Ա/Ձ Սուսաննա Պողոսյանը շարունակել է իր ձեռնարկատիրական գործունեությունը և կատարել ընթացիկ հարկային պարտավորությունները: Սակայն տեղեկացել է, որ առանց իր համաձայնության վճարված գումարներն ուղղվել են վերը նշված ակտի մարմանը, ինչը հակասօրինական է և խախտում է տնտեսավարող սուբյեկտի իրավունքներն ու շահերը:

Բողոքում բերված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի, 83-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները:

Նման պայմաններում հարկային մարմինը պարտավոր էր կասեցնել նշված ակտի կատարումը և թույլ չտալ, որպեսզի ընթացիկ պարտավորությունների դիմաց վճարվող գումարներն ուղղվեն ակտով առաջադրված պարտավորությունների մարմանը:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Սուսաննա Պողոսյանը խնդրում է ձեռնարկել համապատասխան միջոցներ հարցի կարգավորման ուղղությամբ:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ԿԱ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետի 17.11.2017թ. թիվ 2138821 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Սուսաննա Պողոսյանի մոտ իրականացվել է ստուգում: Արդյունքում 2017թ. դեկտեմբերի 19-ին կազմվել է թիվ 2138821 ստուգման ակտը, որով առաջադրվել է վճարման լրացուցիչ պարտավորություն՝ գումարով 300.000 դրամի չափով:

Այնուհետև, Ա/Ձ Սուսաննա Պողոսյանի կողմից ՀՀ վարչական դատարան է

ներկայացվել հայցադիմում թիվ 2138821 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որն ընդունվել է վարույթ (վարչական գործ թիվ ՎԴ/1816/05/18):

Հայցադիմումն վարույթ ընդունվելուց հետո Ա/Ձ Սուսաննա Պողոսյանը վճարել է իր ընթացիկ հարկային պարտավորությունները, որոնք, սակայն, ուղղվել են նշված ակտի մարմանը:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, բացառությամբ՝

1) օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման.

2) այն դեպքերի, երբ վարչական մարմինը վարչական ակտ (ներառյալ՝ վարչական բողոքի վերաբերյալ ըստ էության որոշում) ընդունելիս գրավոր ձևով հիմնավորել է, որ անհապաղ կատարումն անհրաժեշտ է՝ ելնելով հանրային շահերից:

Տվյալ դեպքում, քանի որ բացակայում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված վարչական ակտի անհապաղ կատարման հանգամանքը, հետևապես ՀՀ ԿԱ ՊԵԿ 2017թ. դեկտեմբերի 19-ի թիվ 2138821 ակտի կատարումն օրենքի ուժով՝ նշված ակտի դեմ բերված հայցադիմումն վարույթ ընդունվելու օրվանից, համարվել է կասեցված: Այսինքն, ՀՀ ԿԱ ՊԵԿ 2017թ. դեկտեմբերի 19-ի թիվ 2138821 ակտը դատական կարգով վիճարկվելու պայմաններում հարկային մարմնին անհրաժեշտ է ձեռնպահ մնալ դրա կատարմանն ուղղված գործողություններից, մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Քննարկվող դեպքում թիվ ՎԴ/1816/05/18 վարչական գործը գտնվում է դատաբնության փուլում: Այսինքն, նշված վարչական գործով դեռ առկա չէ գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով սույն հարցի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված նախադեպային որոշումները, Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ 2017թ. դեկտեմբերի 19-ի թիվ 2138821 ակտի դեմ բերված հայցադիմումն վարույթ ընդունվելու օրվանից հետո Ա/Ձ Սուսաննա Պողոսյանի կողմից վճարված այն գումարները, որոնք ուղղվել են նշված ակտով առաջադրված պարտավորությունների մարմանը, ենթակա են վերահաշվարկման:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Վճարված գումարները դատական կարգով վիճարկվող ակտի մարմանն ուղղելու դեմ Ա/Ձ Սուսաննա Պողոսյանի դիմում-բողոքը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Դ.ԱՆԱՆՅԱՆ